



# Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



**ԳԻՏ ԽԱՉԻ**

**25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2009**

<b>Կիրակնօրեայ ընթերցումներ</b>	<b>էջ 1</b>
<b>Խաչին Պահպանութիւնը</b>	<b>էջ 2</b>
<b>Ծանուցում</b>	<b>էջ 4</b>

### ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԷՆ (14.1-8)

Ուրիշ մը, որ ամեհի ալիքներուն ընդմէջէն նաևով ճամբորդելու կը պատրաստուի, փայտէ կուռքի մը կ'աղօթէ, փոխանակ վստահելու զինք փոխադրող նաևուն, որ թէպէտ շահու համար հնարուած է եւ ճարտար արհեստաւորի ձեռքով շինուած, սակայն դո՛ւն ես, ո՛վ Հայր, որ քու տեսչութեամբդ զայն կը վարես. դո՛ւն ես որ ծովուն մէջ ճամբայ կը բանաս եւ ալիքներուն մէջ՝ ապահով շաւիղ, եւ ատով իսկ ցոյց կու տաս թէ ամէն վտանգէ կրնաս փրկել, նոյնիսկ եթէ անփորձ ըլլայ զեկի գլուխ կանգնողը:

Բայց քու կամքդ է՝ որ իմաստուն ստեղծագործութիւնդ մարդոց ծառայէ. ասա թէ ինչո՛ւ մարդիկ իրենց կեանքերը կը վստահին ամենափոքր փայտին, եւ նոյնիսկ լաստով մը ալիքները ճեղքելով ողջ-առողջ տեղ կը հասնին:

Արդարեւ, ջրհեղեղի ատեն ալ, երբ ամբարտաւան հսկաները կորուստի մատնեցիր, Նոյ՝ աշխարհի յոյսը, լաստափայտին ապաւինեցաւ եւ քու ձեռքովդ առաջնորդուեցաւ, աշխարհի մէջ մարդկային սերունդը ապահովելու համար:

Հետեւաբար օրհնեալ է այն փայտը որ արդարութեան պատճառ կ'ըլլայ. բայց անիծեալ են թէ՛ ձեռագործ կուռքը եւ թէ՛ զայն շինողը, մէկը՝ զայն շինելուն համար, իսկ փուճ փայտը՝ աստուած կոչուելուն համար:

### ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (33.22-34.1)

Տէ՛րն է մեր հայրը, Տէ՛րն է մեր դատաւորը, Տէ՛րն է մեր իշխանը, Տէ՛րն է մեր թագաւորը, Տէ՛րն է մեր փրկիչը, ի՛նքն է որ մեզ պիտի փրկէ:

Այն ատեն, նաւերուդ պարանները պիտի փտին, կայմերը պիտի իյնան. ալ ո՛չ առագաստ պարզելու պէտք պիտի ըլլայ, ո՛չ ալ դրօշակ, եւ նաւերդ մնալէն պիտի քայքայուին:

Տէ՛րը իր վարձատրութենէն պիտի չզրկէ ոեւէ մէկը, ճիշդ ինչպէս յաղթանակէ մը վերջ երբ ավարը մեծ ըլլայ՝ կողերն անգամ անկէ բաժին մը կ'առնեն: Այն ատեն այլեւս յոգնութիւն եւ ցաւ գոյութիւն պիտի չունենան, որովհետեւ Տէ՛րը պիտի ներէ իր ժողովուրդին մեղքերը:

Մօտեցէ՛ք, ո՛վ հեթանոսներ, եւ լսեցէ՛ք. ակա՛նջ դրէք, ո՛վ իշխաններ. թող երկրին բնակիչները եւ աշխարհի ժողովուրդները լսեն:

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.18-24)

Խաչելութեան մասին խօսիլը յիմարութիւն կը թուի կորստողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան դիմողներուն համար Աստուծոյ զօրութիւնն է անիկա:

Արդարեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Իմաստուններուն իմաստութիւնը պիտի խափանեմ, խելացիներուն խելքը պիտի կորսնցնեմ»: Այն ատեն ո՞ւր պիտի մնան իմաստունները կամ

Զէ՞ որ Աստուած ցոյց տուաւ թէ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է:

ուսեալները եւ կամ այս աշխարհի հարցերը քննող ճարտասանները: Չէ՞ որ Աստուած ցոյց տուաւ թէ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է: Որովհետեւ աշխարհը իր ունեցած իմաստութեամբ չկրցաւ ճանչնալ զԱստուած եւ անոր իմաստութիւնը, Աստուած ուզեց յիմարութիւն համարուած խաչին քարոզութեամբ փրկել հաւատացողները: Եւ քանի հրեաներ հրաշք կ'ուզեն, իսկ յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գայթակղութիւն է հրեաներուն համար եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն համար, թէպէտ նոյն այդ հրեաներէն եւ յոյներէն կանչուածները եւ դարձի եկածները Քրիստոսը կ'ընդունին որպէս Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(24.27-36)**

*Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ.*

«Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը լուսաւորէ ամբողջ երկնակամարը, արեւելքէն արեւմուտք: Արժիւնները կը հաւաքուին հոն ուր դիակ կայ:

Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի. երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ապա Մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թղենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ Մարդու Որդին գալուստը մօտ է: Վստա՛հ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ

երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը»:

**ԽԱՉԻՆ ՊԱՇՊԱՆՈՒԹԻՒՆ**

**ԳԱՌՆԻԿ Ք.Գ.**

«...սովաւ գկեանս մեր պահեա՛»,  
Շարական:

*Ինչպէ՞ս է, որ խաչը կը պահպանէ:*

Յիսուս ըսած է. «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ» (Մկ 8.34):

*Ի՞նչ է ըսել ուզուածը:*

Արդեօ՞ք ամէն Յիսուսի հետեւող պէտք է խաչ բարձրանայ կամ արեան հեղումով հաստատէ իր հետեւող ըլլալը: Ա՞յդ է ըսուածը: Ո՛չ: Հապա ի՞նչ է: Պետո՞ս առաքեալ այսպէս բացատրած է. «Աստուծոյ մէկ շնորհքն է, երբ Աստուծոյ կամքը գիտնալով՝ մարդ կը համբերէ անիրաւ տեղ կրած նեղութիւններուն: Արդարեւ, ի՞նչ արժանիք կ'ունենաք, եթէ ձեր գործած յանցանքներուն համար տանջուիք եւ համբերէք. մինչդեռ երբ բարիք գործելով չարչարուիք եւ համբերէք՝ Աստուծոյ քով շնորհք կը գտնէք» (Ա. Պտ 2.19-20):

Յիսուսի խօսքը նախ կը հրաւիրէ սեփական անձը ուրանալ:

*Սակայն ինչո՞ւ անձը ուրանալ:*

Նախ սա ըսեմ, որ «ուրանալ» բայը մեր այսօրուան ընկալումին մէջ գուտ ժխտական կամ յոռի նշանակութեամբ կը գործածուի: Այսպէս՝ կը գործածուի իբր ճշմարտութեան հակառակ կենալու կամ անկէ հրաժարելու արարք, իբր իրականութիւնը մերժելու կամ անկէ հրաժարելու արարք, եւ իբր անհաւատարմութեան ընթացք:

Սակայն «ուրանալ»ը՝ պարզապէս «ետ կենալ» ալ կը նշանակէ, այսինքն՝ չյանձնուիլ այն ընթացքին կամ իրականութեան, որ բարի վախճան չի խոստանար:

Նկատի ունենալով Յիսուսի վարդապետութեան ընդհանուր ոգին, իր սեփական անձը ուրանալու կողք՝ պէտք չէ հասկնալ իբր անձին ժխտում: Յիսուս ինքնաժխտումի մասին չխօսեցաւ:

Այդ կողք ուրիշ բան չէ, եթէ ոչ անձնակեղրոնութենէ եւ անձնական շահի հետապնդումէ ետ կենալու կող (տե՛ս Մտ 23.12 եւ Մկ 8.36):

Առիթով մը Յիսուս ըսած է. «Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ» (Մտ 23.12):

Սեփական անձը ուրանալը եւ ինքզինք խոնարհեցնելը՝ մի եւ նոյն ընթացքին երկու արտայայտութիւններն են. առաջինը ներքին կարգապահութիւնն (discipline) է, երկրորդը՝ անոր հետեւող բարքը:

Յիսուսի խօսքը անձին ժխտումը չէ, որ կ'ուզէ: Անձնկեդրոնութիւնը եւ անձնական շահը հոգեկան այն վիճակներն են՝ որոնց ենթակայ անձը՝ ինքզինքով կը գոհանայ եւ ինքնզինք գովելու կամ գովելի դարձնելու կը նայի, եւ կ'ուզէ որ ամէն ինչ իր անձին շուրջ դառնայ:

Մարդ էակին անձնաւոր ըլլալը Աստուծոյ մէկ շնորհքն է: Աստուած է, որ մարդը անձնաւոր ստեղծեց: Առանց անձին՝ Աստուծոյ հետ հաղորդութիւն չկայ:

Բայց ո՞ր տեսակ անձը՝ Աստուծոյ հաղորդակից կրնայ ըլլալ:

Ան՝ որ ինքզինք կը խոնարհեցնէ, ան՝ որ ինքզինք կատարելապէս կը դարձնէ Աստուծոյ: Ըստ Սաղմոսին, որ կ'ըսէ. «Ո՛վ Աստուած, ի՛մ Աստուածս, քե՛զ կը փնտռեմ անձկագին, հոգիս ծարաւ է քեզի, մարմինս քեզի՛ կը փափաքի՝ խոպան, ճաթուած, անջուր մնացած հողի պէս» (Սղ 63.1):

Արդ, սեփական անձը ուրանալու կոչը՝ հրաւէր է անանձնական կեանքի ճանապարհին մէջ մտնելու: Անանձնական մարդը անձկութեամբ զԱստուած կը փնտռէ, կ'ուզէ իր ծարաւը յագեցնել Աստուծոյ ներկայութեամբ, մարմինը՝ այսինքն իր ամբողջ գոյութիւնը կը փափաքի Աստուծոյ հանդիպիլ եւ անոր հետ ըլլալ:

Անանձնական մարդն է, որ զԱստուած կը գտնէ, եւ զԱստուած գտնելով՝ գտած կ'ըլլայ Անոր կամքը կատարող իր հարազատները (Հմմտ Մկ 3.35):

Իսկ ի՞նչ կը նշանակէ «իր խաչը առնել» եւ Յիսուսի հետեւիլը:

Խաչը նշան էր պատիժի: Հռոմէացիները զանազան պատճառներով պատիժի կ'ենթարկէին մարդիկ: Խաչի վրայ բարձրացուած մարդոց մէջ՝ ոմանք ոճրագործներ կ'ըլլային, ոմանք՝ աւազակներ, ոմանք քաղաքական ըմբոստներ, ոմանք անարդար կ'ըլլային, ոմանք արդար:

Նոր Կտակարանին մէջ ինչպէ՞ս տեսնուած է խաչը, աւելի ճիշդ՝ ի՞նչ նշանակութիւն տրուած է անոր:

Առաջին՝ անիկա խորհրդանշան է անձնակեդրոնութենէ եւ անձնական շահէ ետ կենալու, անանձնական ըլլալու:

Երկրորդ՝ անիկա խորհրդանշան էր ինքզինք նուիրելու Յիսուսի եւ անոր Աւետարանին: Եւ

Երրորդ՝ անիկա խորհրդանշան էր սեփական անձը Աստուծոյ կամքին իբր զո՞հ ընծայելու եւ զայն գտնելու Անոր փառքին մէջ:

Այս բացատրութիւններէն ետքը, դարձեալ հարցումը՝

Ինչպէ՞ս է, որ խաչը կը պահպանէ:

Խաչը մոգական գործիք կամ նշան չէ: Խաչը կոչ է:

Խաչը կը պահպանէ՞ անձնակեդրոն կամ անձնական շահ հետապնդող մարդը:

Ո՛չ: Որովհետեւ ան չի կրնար խաչի խորհուրդին հաղորդակից ըլլալ: Անիկա «հին մարդ»ն է, որ ինքզինք խաբէութեան յանձնած է եւ մնայուն կերպով աստուածանալ կը տենչայ: Ան գիտակցաբար կամ անգիտակցաբար կ'ուզէ ինքզինք Աստուծոյ պէս տեսնել: Յիշել Մնունդներու Գիրքին անկումի դրուագը (Մն 3):

Խաչը կը պահպանէ՞ այն անձը՝ որ Յիսուսի առաքելութեան եւ անոր Աւետարանին ինքզինք չի նուիրեր:

Ո՛չ: Որովհետեւ ան ինքզինք յանձնած կ'ըլլայ այլ ճամբու մը, որ աշխարհի ճամբան է: Աշխարհի ճամբան եւ Յիսուսի ցոյց տուած ճամբան իրարու չեն հանդիպիր, իրարմէ բոլորովին տարբեր ուղղութիւններ են: Ինչպէս Յովհաննէս աւետարանիչ դրած է. աշխարհը չի կրնար ճանչնալ Յիսուս-լոյսը (Հմմտ Յճ 1.10) եւ չի կրնար զայն ընդունիլ (նոյն Հմր 11): Հարցը՝ «Յիսուս, քեզ կը սիրեմ» ըսելուն մէջ չէ: Այդ սիրելը եթէ Յիսուսի օրինակով գոհողութեան ստանձնում մը չըլլայ՝ պատրանքային եւ հաճելի խօսք մը միայն կը մնայ: Ինքզինք Յիսուսի առաքելութեան եւ Աւետարանին նուիրելը՝ «բարի պատերազմ»ի մէջ ըլլալ է: Այսինքն՝ պատրաստ ըլլալ մինչեւ իսկ սեփական արիւնը թափելու չափ դիմադրութիւն ցոյց տալու:

Խաչը կը պահպանէ՞ այն անձը, որ ինքզինք Աստուծոյ կամքին իբր զո՞հ չընծայեր:

Ո՛չ: Որովհետեւ ան օտար է խաչին պատգամէն:

Խաչին պահպանութիւնը կը խտանայ Յիսուսի այս խօսքին մէջ. «Ով որ իր կեանքը իրեն կը պահէ՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ իր կեանքը կը կորսնցնէ ինծի համար, պիտի գտնէ զայն» (Մտ 10.39):

Ինչպէս ըսի՝ Խաչը մոգական գործիք կամ նշան չէ: Խաչը կոչ է:

Խաչին պահպանութիւնը վայելողը՝

- 1.- Խաչին աշակերտն է.
- 2.- Խաչին հաւատարիմն է.
- 3.- Խաչի պատգամին քարոզողն է եւ ուսուցանողը.
- 4.- Խաչին ծառան է.
- 5.- Խաչին զինուորն է:

Այդ պահպանութեամբ Աստուած կը համբերէ՝ որովհետեւ չ'ուզեր որ մարդիկ կորսուին (տե՛ս Բ. Պտ 3.9), ինչպէս կորսուեցան մեղքով ծանրաբեռնեալ քաղաքներուն բնակիչները (Մն 19.23-25):

30-ԱՄԵԿ  
Ս. ՅԱԿՈԲԻ ԿՐԻԱԿԱՏՐԵԱԿ  
ԿՐԹԱՐԱՆԻՆ

ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹԵԱՐ՝  
ԳՐԸ. Տ. ԽԱԺԱԿ Ս. ԱՐԲ.  
ՅԱԿՈԲԵԱՆԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ՝  
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵԱՐԻՆ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ԹԷՅԱՍԵՂԱՆ

ԲԱՆԱԽՕՍ՝  
ՀԳՐ. Տ. ԳԵՂԱՐԻ ՎՐԻ.  
ՔՐԻՍՏՈՒԿԵԱՆ

(ԹԵԱՐԻ ՔՐԻՍՏՈՒԿԵԱՆ  
ԴԵԱՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԻԻ ՎԱՐԻՉ)

ԵՐԹ՝  
ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ  
ԴԵԱՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՅՐ՝  
ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ Ա. ԱՇԱՐՈՒՆԵԱՆ  
ԱՐԱՀ

ԹՈՒԿԱՆ ԵՒ ԺԱՄ՝  
ՇԱՔԱԹ, 21 ՆՈՅԵՄԲԵՐ 2009-Ի  
ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7.00-ԻՆ

ՏԵԴԵՐԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՀԱՃԵՑԷՔ ՀԵՌԱՋԱՅՆԵԼ  
ՀԵՏԵԻԵԿԼ ԹԻՒՆ  
514 331 5445 x202

ԼՈՅՍ ՏԵԱՐ

«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻՒ 6

ARAM I  
DIALOGUE WITH THE YOUTH



DIALOGUE AVEC LES JEUNES

Traduction française par  
Daniel Racine

MONTREAL 2009

ՀԱՄԱԼԱՐԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ՝ ՁՐԻ  
ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԿՐ ԽՆԴՐՈՒ ԱՆՁԱՐ ԵՐԿԱՅԱՆԱԿ  
ԵԿԵԴԵՅԻՅԱ ԳՐԱՆԵՆԵԱԿ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ  
ԱՌՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՎՍՈՐՕՔ  
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ  
ԵԿԵԴԵՅԻՅԱ ԴԻԲԱՆԱՏՈՒՄ

ՆԱԽՈՐԴ ԹԻՒՆԸ ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ  
[www.sourphagop.org/lradou](http://www.sourphagop.org/lradou)  
ԿԱՅԷԶԻՆ ՎՐԱԿ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՐ Ե-ԱՄԱՆԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ  
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԵՆ ՈՐԴՈՂԱՐԿԵՅԷՔ  
[eglise58@sourphagop.com](mailto:eglise58@sourphagop.com)-ԻՆ